


## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հունվարի 1-ին, երկուշաբթի.—Կաղանդ, Տարեմուտ:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը և «Հայր մեր»-ից առաջ օրվա խորհրդի առթիվ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Հունվարի 5-ին, ուրբաթ.—Ծրագալոյց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառնը մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Հունվարի 6-ին, շաբաթ.—Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի բովանդակալից քարոզ խոսեց (տես էջ 3):

*
* *

**Հունվարի 7-ին, կիրակի.—Յիշատակ մեռելոց:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, հոգեհանգստյան ս. պատարագ մատուցեց Մայր տաճարի մկրտարանի ծիսակատար Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

*
* *

**Հունվարի 10-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

**Հունվարի 13-ին, շաբաթ.—Տօն Անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրված մեծ տոնի առթիվ, ս.

պատարագ մատուցեց Մայր տաճարի մկրտարանի ծիսակատար Տ. Եղիշե ավագ քհն. Բաղրամյանը:

*
* *

**Հունվարի 14-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սեպուհ վրդ. Չուլջյանը:

*
* *

**Հունվարի 17-ին, չորեքշաբթի.**— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

**Հունվարի 21-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը (տես էջ 32):

*
* *

**Հունվարի 24-ին, չորեքշաբթի.**— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

**Հունվարի 28-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը:

*
* *

**Հունվարի 31-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ: